ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՝
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 4 *Общественные науки*

Լ. Թորոյան

ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՎԱՐՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մոնղոլական աշխարհակալ. պետության ներքին և արտաքին քաղաքականության մասին պատմագրության մեջ մինչև այսօր բավականին խոսվել է։ Սակայն մեզ թվում է, որ ուսումնասիրողներից շատերի աչքից վրիպել է արևելյան բռնակալության բնորոշ գծերը մարմնացնող ժամանակաշրջանին վերաբերող պատմական մի կարևոր փաստաթուղթ, որն իր էությամբ արտահայտում է մոնղոլական պետության քաղաքականությունը։

«Ալտան-տորչի» (Altan-tobcl) կամ «Մոնղոլական խրոնիկա» աշխատության մեջ պահպանված է հետևյալը. Ցինգիզ-խանը ուղարկելով իր Սուբեթեյ Բահադուրին հակառակորդ Ալասարին, որն իր եղբայրն էր, հետապնդելու, հետևյալ հառն է ասում.

«Դուք, զորքեր իմ, նման շեշտակի
նետվող հոտերի,
Դուք նման ագռավների, լուսնաձև
գլխարկի զարդի,
Դուք նման քարերից կազմված
մի կույտի,
Դուք ուժեղ և արի իմ բարեկամներ,
Դուք նման իրար մոտ աճած
եղեգների,
Դուք նման շրջապարսպի,
Դուք ինձ ենթակա զորքեր,
Լսեցեք։
Սովորական կյանքում պահեցեք ձեզ
նման երկամյա հորթերի,
Գրոհների և ասպատակությունների ժամանակ
հարձակվեցեք՝ ինչպես բազեներ,
Անջուրքների և խաղերի ժամանակ եղեք
կայտառ՝ ինչպես մատաղ նժույգներ,
Ընդհարումների ժամանակ հարձակվեցեք
թշնամիների վրա՝ ինչպես բազեներ,
Առօրյա կյանքում հաշտ պահեք ձեզ՝
ինչպես անույժ հորթեր,
Ասպատակությունների և հարձակումների
մեջ եղեք արագաշարժ՝ ինչպես հարբուկներ,
Ձմարձանքների և ուրախությունների ժամանակ
ապրեցեք համերաշխ՝ ինչպես եռամյա

և երկամյա հորթեր,
Թշնամիների հետ նետաձգության մեջ
հարձակվեցեք՝ ինչպես բազեներ,
Հարձակվեցեք՝ ինչպես սոված վագր,
ինչպես գազազած բուրգուտ,
Եղեք ղղոն՝ ինչպես զգույշ գայլը
պարզ օրում,
Համբերատար՝ ինչպես սև ագռավը
խավար գիշերին,
Անհողդողդ և խանդոտ՝ ինչպես
թագուհիներ»[1]

Այս ճառն ինքնին մի շատ կարևոր փաստաթուղթ է և արժանի է հատուկ ուսումնասիրության։ Առայժմ հարկ ենք համարում մեր առաջադրած նյութի առնչությամբ, նրա առթիվ մի քանի խոսք ասել։

Ինչպես տեսնում ենք, այս պատվիրանները, որոնք թերևս մոնղոլ ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերությունների արգասիքն են և նրա անհրաժեշտ ու անխուսափելի պահանջի արտահայտումը, իրենց վրա բացահայտորեն կրում են նախաֆեոդալական-բարբարոսական-քոչվորական հասարակակարգի կնիքը, մի հասարակակարգի, որտեղ ռազմական դեմոկրատիան կազմել էր այդ հասարակակարգի հիմքը, նրա բազիսը։

Պատմությունն իսկապես ցույց տվեց, որ ռազմատենչ մի ժողովուրդ, որն արդեն կանգնած էր տոհմատիրական հասարակակարգի քայքայման և ֆեոդալական հասարակակարգի անցման ճանապարհին, կարողացավ կարճ ժամանակաշրջանում նվաճել և տիրել խոշոր տերիտորիաների և տերություններ, թևակոխել հասարակական հարաբերությունների զարգացման հետագա էտապները և իր ժամանակին հանգիստանալ առաջիններից մեկը համաշխարհային տիրակալ ժողովուրդների շարքում։

Մոնղոլ նվաճողներն իսկապես առաջնորդվում էին Չինգիզ-խանի ավանդներով։

Հարձակվել՝ ինչպես սոված վագր, լինել զգոն՝ ինչպես գայլ, արագաշարժ՝ ինչպես ճախրուկ, վճռական ու համարձակ՝ ինչպես բազե, համբերաշիտ՝ ինչպես հորթեր։ Հայտնի է, վերջապես, Չինգիզ-խանի փաստարկումը, թե՝

«Ամենամեծ ուրախությունն է հետապնդել իր թշնամիներին, բռնագրավել նրանց գույքը, տեսնել նրանց ընտանիքների արցունքները, ճանապարհորդել նրանց ձիերով և տիրել նրանց կանանց ու աղջիկներին»[2]

Այս իդեոլոգիան և նրա հիմքը հանդիսացող նյութական կյանքի պայմանները նպաստեցին մոնղոլական հզոր աշխարհակալության ստեղծմանը։ Սակայն հետագայում այդ հզոր պետությունը գեպի կործանում գնաց նույն արագությամբ, ինչ արագությամբ հանդես էր եկել պատմության

[1] „Алтан-тобчи" (Золотое сказание), перевод с монг. на русск. Л. Г. Гомбаева, стр. 14—15.

[2] Ջեմալ-Ալ Ճավարիխ, տես П. Сайке, „История Персии", т. I, стр. 132 (на правах рукописи), Лондон, 1930 г.

Թատերաբեմի վրա։ Կենտրոնախույս ուժերի հանդես գալը, տերիտորիալ ու գահակալական կռիվները, դասակարգերն ու դասակարգային ներհակություններն ու պայքարը, պետության մոնոլիտ չլինելը, առևտրական հարաբերությունների զարգացումը և բազմաթիվ այլ գործոններ սկսեցին խարխլել Չինգիզ-խանի աշխարհակալ պետության հիմքերը և նրան դեպի անխուսափելի կործանում տարան։

* * *

Աշխարհակալական արշավանքներից հետո, Չինգիզ-խանի հաջորդների ժամանակ, մոնղոլական հզոր պետությունը գոյություն ուներ միայն անվանապես։ Փաստորեն նա բաժանվել էր երեք խոշոր ինքնուրույն պետությունների՝ 1. արևելյան կամ կենտրոնական, 2. պարսկական կամ իլխանական և 3. Ոսկե-հորդայի պետությունը։ Նախումը կենտրոնական իշխանությունից՝ ձևական էր։ Ճանաչվում էր մեծ խանի ավագությունը, գահերի վրա նշանակման կամ հաստատման իրավունքը և արդեն օրոնք դարձած նվերներ տալու նախկին սովորույթը։

Ռաշիդ-Ադ-Դինի մոտ կարդում ենք.

«Հին սովորության համաձայն, խնջույքը տևեց երեք օր, նորին գերազանցության էմիրները, պետության վեզիրները, վրացական, ռումի, հայկական հողերի սուլթանները... գավառների իշխանների (մելիք), երկրների կառավարիչների (մութեսարիֆ), հարկահավաքների և նահանգների ու շրջանների քարտուղարների (քաթիբ) հետ միասին, հերթականությամբ, համաձայն իրենց աստիճանի, մատուցում էին նվերներ...»[1]

Նվաճված բոլոր երկրները սկզբնական շրջանում հանդիսանում էին մոնղոլական մեծ խանի սեփականությունը (առերևույթ նրանք համարվում էին նվաճող ժողովրդի սեփականությունը)։ Հետագայում այդ երկրները՝ նվաճող արքայական տան ներկայացուցիչներն ասիճանաբար գառնում էին կիսանկախ և անկախ ինքնակալներ-իլխաններ (ժողովուրդների աեր-իշխողներ)։

Սրանք իրենց հերթին նվաճված գավառներում և շրջաններում հայրենի իշխողների կողքին ունեին իրենց էմիրները և դարուղաչիները։

«Եւ ինքեանք դարձան ի տեղի իւրեանց յերկիրն Մուղանայ, բայց թողին գլխաւոր մի...»[2]

«Բայց ոչ կոտորեցին զնոսա, այլ առեալ աւար զինչս նոցա եւ զմարգիկն համարեալ՝ եդին հարկս ի վերայ նոցա ըստ զսովորութեան իւրեանց, մալ և թաղար և թողեալ շահնա ե գլխաւորս յերկրին հոռոմոց»։[3]

Հաճախ պատահում էր, որ նույնիսկ տեղական իշխողներն էին հան-

---

[1] *В. Т. Тизенгаузен*, „Сборник материалов, относящихся к истории Золотой Орды", т. II, Москва—Ленинград, 1941 г., стр. 84.

[2] *Заходер*, „История Восточного Средневековья, Москва, 1944 г., стр. 113.

[3] Մատթիա Արեղայ, «Պատմութիւն վասն ազգին Նեստորեաց», Ս. Պետերբուրգ, 1870 թ., էջ 8.

[4] Անդ, էջ 10.

դես դալիս այդ պաշտոններում, օրինակ՝ Անի քաղաքի կառավարիչները, Սյունիքում իշխող Օրբելյանները և այլն։

«...Յետ տիրելոյ Բաղդատայ ե շրջակայ տեղեաց՝ բաժանեաց [Հուլաուն] զգաւառսն զօրավարաց և վարչաց ըստ հաճոյս իւր...»[1]

«Զկնի անցանելոյ ինչ աւերման քաղաքին Գանձակայ, այս զօր մոլեկան եւ խորամանգ, իրրև վիճակաւ բաժանեալ զամենայն աշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից՝ իւրաքանչիւր գլխաւորի, ըստ մեծութեան և փոքրկութեան զբաղաքս եւ զգաւառս, դաշխարհս և զբերդս...»[2]

Հիմնվելով Համդալլահ Ղազվինու տված փաստերի վրա, Պետրուշևսկին արել է հետևյալ եզրակացությունը.

«Տեղական իշխող ֆեոդալները գիտվում էին միայն որպես կենտրոնական իշխանության կուսակալներ։

Հարկ չկա կասկածելու այն բանում, որ մոնղոլների ժամանակ Աղբրեջանում, Շիրվանում ու Արանում և երկրորդական տեղական ֆեոդալական տները՝ Շիրվանշահերի, Սյունիքի (Ներկայիս Զանգեզուր) Օրբելյանների և ուրիշ ավելի խոշոր տների վասալները և արիեր-վասալները (մելիքները և էմիրները) բազմաթիվ էին։ Նրանց սենիորիաների սահմանները չէին համընկնում մոնղոլական պաշտոնական վարչական-հարկային բաժանումների հետ—գավառների (վիլայեթների, թումանների և նախիյների) չէին բաժանվում... տեղական մելիքների կողքին ի միջի այլոց կանգնած էին կենտրոնական իշխանության գործակալները՝ զինվորական իշխանությամբ օժտված...»[3]

Արդեն 14-րդ դարի 40-ական թվականներից, մոնղոլական պետության քայքայման շրջանում, տեղական ֆեոդալական մանր տների իշխանությունը շատ ավելի մեծ լիազորություններով էր օժտված, քան անցյալում ահ ու սարսափ տարածող կուսակալներինը։ Այդ պրոցեսն ուժեղացավ հատկապես այն ժամանակ, երբ Հուլավյանների պետության մեջ ծավալվեցին ֆեոդալական ներքին պայքարը, տերիտորիալ կռիվները և զյուղացիական ու արհեստավորական ապստամբությունները։

Մոնղոլական տիրապետության շրջանում, ինչպես տեսանք, նվաճողների—ռազմա-ֆեոդալական ազնվականության լենների (ավատների) կողքին, հին տեղական ազնվականության ձեռքին մնացած հողերը նույնպես մեծ տարածություններ էին կազմում։

Պատմագրական բոլոր փաստերը մեզ բերում են այն եզրակացության, որ Հայաստանը, ինչպես և մյուս նվաճված երկրները, որոնք պահպանել էին իրենց ներքին կառուցվածքը, մոնղոլական նվաճողների համար կազմում էին առանձին հատուկ շրջաններ, վիլայեթներ և թումաններ։ Այդ վիլայեթների և թումանների վարչաձևը տարբեր տեղերում տարբեր էր, որոշ շրջաններում կառավարիչներ նշանակում էին տեղական իշխողներից, որոշ շրջաններում՝ իրենցից։ Օրինակ, Հայաստանում Սյունիքը կառավարում էր Օրբելյանների իշխանական տունը, իսկ Շիրակում մոնղոլ կառավարիչ էր նշանակված։

[1] Հերում պատմիչ, «Պատմութիւն թաթարաց», Վենետիկ, 1842 թ., էջ 46։

[2] Կիրակոս Գանձակեցի. «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910 թ., էջ 224։

[3] Известия АН СССР, отд. общ. наук, 1937 г., № 4, стр. 877—878. "Хамдуллах Казвини, как источник по социально-экономической истории Восточного Закавказья."

Կառավարման վերը նշված սիստեմով մոնղոլները հետապնդում էին մի նպատակ, այն է՝ նրանք դերադասում էին նվաճված երկրներում բանակցությունների և պայմանագրերի միջոցով իրենց ենթարկել տեղական իշխող դասակարգերին, քան ռազմական արշավանքներով քայքայել և ոչնչացնել այդ երկրները։ Միևնույն ժամանակ նրանք աշխատում էին իրենց միշտ ապահովել տեղական ֆեոդալական վերնախավի գործակցությամբ, որքանով այդ խավը միջոցներ և հնարավորություններ ուներ լայն մասսաների վրա ազդելու և նրանց այս կամ այն ուղղությունը տալու, քանի որ հիմնականում այդ մասսաներն էին հանդիսանում հարկեր վճարողները։ Այս քաղաքականությունը, իհարկե, որոշ տեղերում, ինչպես նաև Հայաստանի որոշ շրջաններում, ունեցավ իր նպատակադրված հաջողությունը, բայց այստեղից անվերապահորեն չի կարելի եզրակացնել, որ վերոհիշյալ շրջանները չէին թալանվում ու ավերվում։ Հենց Հայաստանում Կարսի գրավման փաստը ցայտուն ապացույց է այն բանի, որ իրենց կամքով հպատակություն հայտնած գավառները և քաղաքները զերծ չէին մնում ավերածություններից։ Մոնղոլների հիշյալ քաղաքականությունից ելնելով, ուսումնասիրողներից ոմանք այն կարծիքն են հայտնել, թե Հայաստանը տնտեսական ժամանակավոր անկում է ապրել, միայն նվաճումների շրջանը համարելով երկրի տնտեսական և քաղաքական կյանքի անկման շրջան։

* *

Մոնղոլական առաջին բռնակալները պահպանում էին զինվորական դեմոկրատիայի մի քանի բնորոշ գծեր։ Նվաճումների, արշավանքների նպատակն էր ավարը, կողոպուտը և այլն։ Սակայն հետագայում նվաճելով մի շարք երկրներ, որտեղ ֆեոդալական հասարակակարգը գտնվում էր զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, մոնղոլները ևս ընթացան նստակյաց հողագործության և ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացման ուղիով։ Բարդացավ և նվաճողների վարչա-տնտեսական կառուցվածքը, այն վերակառուցվեց նվաճված երկրների պետական ու վարչական կառուցվածքի ազդեցության տակ։

Մարքսը գրում է.

«...Այնպես որ, նկատի չունենալով պատերազմներն ու նվաճումները, Չինգիզ-խանի պետական իմաստությունը, որ ընդհանրապես չինական ծագումն ունի, մոնղոլական պետության ներքին կառուցվածքում միշտ էլ գերակշռում է չինական սկզբունքը, այսինքն այստեղ առաջ եկող կուլտուրան չինական է»։[1]

Ինչպես տեսնում ենք, Չինաստանի նվաճումից հետո Չինգիզ-խանի ստեղծած Արևելյան-չինական հզոր կայսրության մեջ նրանք պետության ներքին կառուցվածքում յուրացրին կառավարման չինական սկզբունքը։ Հետագայում նվաճելով Պարսկաստանը, փոքր-ասիական երկրները և Անդրկովկասը, նրանք յուրացրին կառավարման պարսկական սկզբունքը։ Հուլավյանները կառավարման համար այդ երկրներում ստեղծեցին պարսկական տիպի ուժեղ բյուրոկրատական ապարատ։

1 Архив Маркса-Энгельса, т 5. стр. 227.

Ակադ. Բարտոլդը գրում է, թե մոնղոլները «քաղաքացիական կառավարման մեջ գերազանցապես օգավել են պարսիկների ծառայություններից»[1]

«Մոնղոլական խրոնիկայում» կարդում ենք.

«Սարտաուլյան՝ ժողովրդի վերջնական նվաճումից հետո, Չինգիզ-խանը բոլոր քաղաքներում սկսեց նշանակել զինվորական կուսակալներ—դարուղաչիներ... Անգամ Չինաստանում սարտաուլյան մարդկանցից նա նշանակեց խորհրդատու-ուղեկից կառավարիչներ (կառավարիչների կցորդներ), որովհետև նրանք հնարավորություն ունեին Մասխուտի միջոցով Ցալովաչիից քաղաքների օրենքների և որոշումների մասին հրահանգներ ստանալու»[2]

Անդրկովկասյան երկրները, Պարսկաստանը և Փոքր Ասիան արդեն կրում էին բյուզանդական, արաբական և սելջուկյան պետականության կնիքը, նրանց վարչական-տնտեսական ու սոցիալական կառուցվածքի ազդեցությունը։ Մոնղոլները նվաճելով այդ երկրները և յուրացնելով նրանց պետական ու սոցիալական կառուցվածքի որոշ տարրերը, հաճախ այն ամրողջությամբ ընդօրինակելով, ստեղծեցին կառավարման մի սիստեմ, որ մի խայտաբղետ պակեր ուներ, հանդիսանալով արևմտա-եվրոպական պետական ու սոցիալական կառուցվածքի և արևելյան բռնակալության սինթեզը, նրանց մարմնացումը։

Նվաճված երկրներում մոնղոլների մտցրած փոփոխությունների (տվյալ դեպքում Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում) նորությունն ըստ էության—այդ՝ տնտեսական կյանքում կատարված որոշ փոփոխություններն էին։ Նրանք փոխեցին հարկահավաքման սիստեմը, մտցրին հողատիրության արտոնյալ նոր ինստիտուտներ և մի շարք սոցիալական-տնտեսական տերմիններ ժառանգություն թողին նվաճված ժողովուրդներին։

Հետախուզության նպատակով կատարված առաջին արշավանքի ժամանակ պակաս դեր չխաղաց նրանց կողմից տարված ագիտացիոն աշխատանքը, որն առանձին դեպքերում արդարացրեց նրանց սպասելիքը։

Մասամբ դրանով է բացատրվում Հայաստանի նվաճման ժամանակ կազմակերպված ընդհանուր դիմադրության բացակայությունը։

Նրանց քաղաքականությունն էր, ինչպես ամենուրեք, նույնպես և Հայաստանում, նվաճումների ժամանակ սիրաշահել իշխող դասակարգին և եկեղեցուն, նրանց դարձնելով իրենց քաղաքական-նվաճողական նպատակների համար միջոց և գործիք։ Լավ հասկանալով Հայաստանի ունեցած դերը (ինչպես և Կիլիկիայի) իրենց հետագա նպատակների իրագործման տեսակետից և որպես պլացդարմ առաջիկա նվաճումների համար, նրանք իրենց նվաճումների ընթացքում օգտագործեցին երկրի ներսում ստեղծված ներքին իրադարձությունները։

Որոշ երկրներում, ինչպես և Հայաստանում, պահպանվում էին հպա-

[1] *В. Бартольд*, „Ираи", Ташкент, 1926 г., стр. 31.

[2] Сарты—название туземных оседлых жителей городов и сел обл. Сыр-Дарьинской и части Ферганской и Самаркандской. Брокгауз и Ефрон, т. 56, стр. 419.

[3] *С. А. Козин*, „Монгольская хроника", т. I, стр. 189, Москва—Ленинград, 1941 г.

տակություն հայտնող իշխանների իրավունքները, նրանց կալվածքները, նրանց ֆեոդալական իրավունքներն այդ կալվածքների նկատմամբ։ Ֆիզիկապես չէին ոչնչացնում իշխող դասակարգի ներկայացուցիչներին, առանձին դեպքերում նույնիսկ հպատակություն հայտնած և նրանց մոտ ծառայության մտած իշխաններին նոր տերիտորիաներ էին նվիրում և պաշտոններ տալիս։

Ստեփանոս Օրբելյանն ասում է.

«...Եւ տեսեալ զնա Ասլանին՝ յոյժ սիրեաց և ընկալաւ զնա, և արար խաղաղութիւն. և կալեալ զնա առաջնորդ գնաց մինչև յԱնի և հնազանդէր զամենայնն։ Իսո նա զվայոց ձոր, և զեղեգիս մինչև յերերօն գիւղ, որ է հանդէպ Գարնւոյ. եւ ետ զամենայնն Ելիկումին, եւ ասէ. «Թրով առածն և ոսկւով գնածն միապէս հայրենիք են մարդոյ. արդ զոր ես սրով իմով առի՝ այս զավառք քեզ լիցի ի հայրենիս եւ ազգի քո. եւ դու միամիտ սրտիւ տես զմեզ՝ եւ ծառայեա դանին մեծի որ առաքեաց զմեզ աստ...»։[1]

Նման փաստեր շատ կան։

Հայաստանում մոնղոլներին հաջողվում է այս ճանապարհով իրենց կողմը գրավել իշխող դասակարգի ներկայացուցիչների մի մասին, դրանով իսկ դրանք, հայկական ռազմական ուժերը կտրելով ժողովրդական լայն մասսաներից, միացնում էին իրենց հետ և, այդպիսով, ապահովում իրենց տիրապետությունը նվաճված Հայաստանում։ Նվաճված երկրների զինվորական ուժերն իրենց առաջնորդների հետ միասին, տվյալ դեպքում Հայաստանի իշխաններին, իրենց զորամասերով տանում էին իրենց հետ Կովկասի և Փոքր-ասիական երկրները արշավանքներին ու նվաճումներին մասնակցելու։[2]

«...Տան զաշխարհն իւր [Հասան Ջալալին] ի ձեռս նորա այլևս յաւելուածով եւ հրամային նմա ամի ամի երթալ զկնի նոցա ի գործ պատերազմի եւ միամտութեամբ կեալ ի հնազանդութիւն նոցա...»։[3]

Թեոդոսուպոլիսի ավերման առթիվ Կիրակոս Գանձակեցին գրում է.

«... Արդ, իբրեւ առ նա [Բաչուն] զիշխանութիւնն, իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց՝ որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ սուլտանին Հոռոմոց»։[4]

Նկարագրելով 1242 թվի մարտերը և Երզնկայի գրավումը, Կիրակոս Գանձակեցին շարունակում է.

«...Բայց քրիստոնեայքն՝ որք էին ընդ նոսա զինուորեալք, զբազումս ազատեցին ի գերելոցն՝ որ յայտնի, եւ որ ի ծածուկ, զքահանայս և զկրօնաւորս, մանաւանդ մեծամեծ իշխանքն՝ Աւագն եւ Շահնշահն, Վահրամ եւ որդի իւր Աղպուղէն, և Խաչենցիքն, Ջալալն Հասան... ...Եւ Գրիգոր Դուլին... եւ այլ իշխանքն եւ զօրք նոցին ըստ կարի իւրեանց...»։[5]

---

1 Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911 թ., էջ 403—404։

2 Մաղաքիա Աբեղա, էջ 13—14։

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 235։

4 Կիրակոս Գանձակեցի էջ 204, Մաղաքիա Աբեղա, էջ 13, 50։

5 Կիրակոս Գանձակեցի, էջ 269։

Վրացական աղբյուրներում կարդում ենք.

«Եվ շատ տեղերին մոտեցան թաթարները և Սոմեխի զորքերը»։[1]

Ֆեոդալական դասակարգի վերոհիշյալ խավի նկատմամբ մոնղոլների վարած հենց այդ քաղաքականության մեջ էլ իրենց փրկությունն էին տեսնում հայ իշխողները։ Կիրակոս Գանձակեցու խոսքերով՝ «անձը և իրավունքը պաշտպանելու համար» նրանք ժողովրդի հոծ բազմությունը թողնում էին բախտի բերմունքին —ավերածության և կողոպուտի, գերեվարության և ոչնչացման։ Թերևս վերոհիշյալ հանգամանքով պետք է բացատրել հայկական ֆեոդալական տների ժամանակավորապես որոշ չափով վերակենդանացման պրոցեսը։ Զաքարյանները ճյուղավորվելով, տիրում են Հայաստանի զգալի մասին, Օրբելյանները՝ Սյունիքի մի մասին, Հասան-Ջալալյանները՝ Խաչենում, Գոռշյան-Խաղբակյանները՝ Կոտայքում ու Գառնիում և այլն։ Սակայն այդ աշխուժացումը կապված էր մոնղոլական բռնակալ ներկայացուցիչների կամայականությունների ու քմահաճույքների հետ։[2] Ստեղծված վասալային հարաբերությունները, սակայն, նվաճված ժողովուրդների իշխող դասակարգերին ոչ մի երաշխիք չէին տալիս նրանց վաղվա ապահովության համար։ Պատմագրական փաստերի վերլուծումը մեզ բերում է այն համոզման, որ մոնղոլները հայ իշխող դասակարգի ներկայացուցիչներին դիտել են ոչ թե որպես նվաճված երկրի տեղական բուն իշխողներ, այլ որպես մոնղոլական պետական պաշտոնյաներ—զինվորական առաջնորդներ, վարչական ներկայացուցիչներ, որոնց բախտն ու վիճակն այնքան էլ նախանձելի չէր, եթե վերհիշենք Ավագ Զաքարյանի, Հասան Ջալալի և ուրիշ հայ իշխանների ողբերգական վախճանը։ Ներքին կյանքում հայ իշխանները որոշ չափով ինքնուրույն էին՝ պահպանելով իրենց նախկին իրավունքները։ Նրանք հանդիսանում էին մոնղոլական փոխարքայի, իսկ հետագայում՝ իրանական իլխանի վասալները, հետևապես և մեծ խանի արիներ—վասալները, կատարելով ֆեոդալական հիերարխիայի սիստեմում ընդունված բոլոր պարտավորությունները, այն է՝ հարկատվություն, պատերազմական գործ, զանազան ծառայություններ ե պարտավորություններ, իրենց դիրքերում հաստատվելու համար խանին կամ իլխանին նվերներ տալը[3] և այլն։ Սակայն նրանք կենտրոնական իշխանությանը արվող հարկերի հավաքման գործին չէին մասնակցում, իրենց կատարած գործի համար հաշվետու էին փոխարքային և իլխանին։ Մոնղոլները նվաճված երկրներում իշխող դասակարգերի մեջ ուժեղացնում էին ներքին երկպառակություններն ու հակասությունները, ղեկավարվելով հռոմեական հայտնի քաղաքականությամբ—„divide et impera“ «բաժանիր, որ տիրես»։ Դրան որպես լավագույն ապացույց կարող է ծառայել Վրաստանում միևնույն ժամանակ երկու թագավոր նշանակելու փաստը (երկու Դավիթների պատմությունը)։[4] Վարելով նման քաղաքականություն, նրանք ապահովում էին իրենց թիկունքն ու տիրապետությունը։

---

[1] Գրոֆ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. II, Երևան, 1936 թ., էջ 59։

[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 250—251, Օրբելյան, էջ 413 և այլն։

[3] Վահրամ Ռաբուսի, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 228, Մաղաքիա աբեղա, էջ 51։

[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 300—301։

Հետագայում, ֆեոդալական բարձր խավը, տեսնելով իր նկատմամբ մոնղոլների վարած քաղաքականությունը և համոզվելով իր դասային իրավունքների անձեռնմխելիության մեջ, ավելի զիջող եղավ մյուս բոլոր հարցերում, հաշտվելով նվաճողների տիրապետության հետ։

Սկզբնական շրջանի թշնամական վերաբերմունքը, մինչև իսկ ապստամբության փորձերը 1249 և 1261 թվերին, որոնց գլուխ կանգնած էին հայ և վրացի ֆեոդալները, տեղ են տալիս հլու հպատակության, և իշխող դասակարգի ներկայացուցիչների մի մասն սկսում է հավատարմությամբ ծառայել նվաճողներին։ Նվաճումների ժամանակ հպատակություն հայտնող իշխաններին ստիպում էին անմիջապես վճարելու մի խոշոր գումար ռազմատուգանք, տալու իրենց ունեցվածքի մեկ տասներորդ մասը և հպատակներ. դրանից հետո իրենց կողմից նշանակում էին կառավարիչներ—բասկակներ և դարուգաչիներ։

«Զինգիզ-խանը նշանակեց բոլոր քաղաքներում... դարուգաչիներ...»։[1]

Հայ պատմագրության մեջ պահպանվել է «բասկակ» տերմինը «պասդաջ» ձևով.

«Վասն որոյ ժողովեցան ի Տփղիս առ Արղունն, որ էր Վազիր եւ պասդաջ (տեսուչ) կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն հրամանատար ամենեցուն եւ իշխեցող արքունի հարկացն եւ մեծ դիւանին...»։[2]

Հետաքրքրական է Ատեփանոս Օրբելյանի հայտնած այս տեղեկությունը, որ Արղունը միաժամանակ և՛ բասկակ էր, և՛ վեզիր։ Այստեղ, մեզ թվում է, թե վեզիրը պետք է որ դարուգաչու ֆունկցիաներ կատարեր, այսինքն Արղունն իր մեջ մարմնացնում էր կառավարման տնտեսական և քաղաքական ֆունկցիաները—«հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկաց և մեծ դիւանին»։ Բասկակներն ու դարուգաչիներն իրենց խստությամբ և պահանջներով ավերում էին երկիրը։ Այդ կառավարիչները նշանակվում էին հարկահավաքման գործը ղեկավարելու և նվաճված երկրներում կենտրոնական իշխանության հրամանների կատարումն ստուգելու նպատակով։ Դրանց քմահաճույքների և կամայականությունների զոհն էին գլխավորապես հայ աշխատավոր ժողովուրդը և մանր ազնվականությունը։

Պետրուշևսկին, խոսելով Վրաստանի կողմից տրվող հարկերի գումարի մեծության մասին, գրում է.

«Վրաստանի կողմից տրվող հարկերի գումարի մեծության բացատրությունը պետք է փնտրել ուրիշ ասպարեզում։ Մոնղոլական նվաճումները, ինչպես և հետագայում մոնղոլների հարկային քաղաքականությունը Վրաստանում՝ առաջ բերեցին տնտեսական անկում։ Հատկապես Հուլավու խանի ժամանակ Վրաստանում իլխանական կու-

[1] С. Козин, „Монгольская хроника", стр. 189.

[2] Ստեփանոս Օրբելյան, էջ 412։ Տես նաև Հակոբյան Հ. «Ուղեգրություններ», հ. Ա. ԺԳ—ԺԶ դարեր, Երևան, 1932 թ., էջ 12, 23։ Ըստ Բերյոզինի՝ բասկակ և «դարուգա» տերմինները նույն նշանակությունն ունեն—նշանակում են «հնչող-քամող», «բասկակ» բայական ձևով «բաս—հնչի, քամի», սահմանական ծագում ունի և համապատասխանում է մոնղոլական «դարուգա» տերմինին։ Տես Греков, Якубовский, „Золотая Орда", Ленинград, 1937 г. стр. 99.

սակալ Խոջա Աղիդ դարուղի ճնշումները... բայց այդ գործոնները կիրառվում էին և Արևելյան Անդրկովկասում ու Հայաստանում, ե ինչպես էլ որ լիներ Վրաստանի տնտեսական անկումը, դարձյալ այն համեմատաբար այնքան խորը չէր, ինչպես Արևելյան Անդրկովկասի անկումը...»[1]

Քաղաքները նույնպես կառավարվում էին նախկին ձևով, կառավարման սիստեմում հիմնական փոփոխություն չէին մտցնում, միայն իշխանների կամ ավագների քաղաքային խորհուրդների կողքին իրենց ներկայացուցիչներն էին նշանակում, որոնք կոչվում էին «դարուղա», «շուհնա»։[2]

«Կառավարման սիստեմը ընդհանուր առմամբ մնում էր հինը։ Մոնղոլական իշխողներն ավելի շուտ, քան կարելի էր սպասել, յուրացրին տեղական կուլտուրան... Մոնղոլական ժողովրդի ներկայացուցիչները չափազանց փոքրաթիվ էին, որպեսզի կարողանային փոխել կյանքի պայմանների ընդհանուր բնույթը...»[3]

Ակադ. Բարտոլդի բերած փաստարկումը, թե «մոնղոլ ժողովրդի ներկայացուցիչները չափազանց փոքրաթիվ էին, որպեսզի կարողանային փոխել կյանքի պայմանների ընդհանուր բնույթը», իհարկե, որոշ դեր խաղացել է, բայց դրանով բացատրել կյանքի պայմանների ընդհանուր բնույթի փոփոխման կամ անփոփոխ մնալու երևույթը—կարծում ենք, ճիշտ չէ։ Այդ պրոցեսը կապված է նվաճողների հասարակական-արտադրական հարաբերությունների զարգացման աստիճանի հետ։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն չուներ տեղական կենտրոնական քաղաքական իշխանություն, այստեղ պահպանվում էր ֆեոդալական հիերարխիայի ավագության ինստիտուտը միայն՝ ժանր և խոշոր ազնվականության վասալային փոխհարաբերությունը։ Ներքին կյանքում ֆեոդալները դարձան քաղաքականապես ինքնուրույն՝ խանական վերահսկողության սիստեմի ներքո։

Հասան Ջալալը Գանձասարի վանքի պատի վրա 1240 թվի թողած արձանագրության մեջ իրեն հիշում է.

«Ես նուաստ ծառայ աստուծոյ
Ջալալ Դաւլայ Հասան որդի
Վախտանդայ, թոռն մեծին Հասա-
նայ, բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ
Արցախական աշխարհի թագաւոր եւ
ի յոգնասահման նահանգի . . .»[4]։

Ակադեմիկոս Օրբելին գրում է.

«Հասկանալի է, որ այս արձանագրության, ինչպես և առաջներում բերվածների մեջ «ինքնակալ», «ինքնակալական» խոսքերը երբեք չպիտի հասկանալ այդ խոսքերի ժամանակակից իմաստով, ներքին անսահմանափակ իշխանության իմաստով, այլ՝ արտաքին, որևէ

[1] Изв. АН СССР, отд. общ. наук. 1937 г., № 4, стр. 903.

[2] Մագաքիա Արեղա, էջ 15—16.

[3] *Акад. Бартольд*, „Персидская надпись на стене Анийской мечети Мануче", С. Петербург 1911 г., стр. 11—12.

[4] Акад. *И. А. Орбели*, „Н'Асан Джалал, князь Хаченский", Петербург, 1909 г., стр. 430.

օտարերկրյա իշխանությունից անկախ լինելու իմաստով։ Այդ նույն տերմինը իրենց տիտղոսում ունէին Տաշիրի թագավորները, հետագայում՝ նաև վրացական թագավորները։ Ինարկե, «ինքնակալ» տիտղոսը, որ կցված է Հասանին, կարող է որոշ կասկածների ենթարկվել, երբ այդտեղ նստած էր մոնղոլական փոխարքան, որ հաճախ նրան ճնշում էր և նույնիսկ մահվան դատապարտեց։ Իայց այդ փոխարքայի իշխանությունը կարող էր կրել միայն վերին հսկողության և հարկահավաքման բնույթ, և իր համեմատաբար շատ փոքր իշխանության կամ թագավորության սահմաններում Հասանը կարող էր անսահմանափակ իրավունքներով իշխան լինել։[1]

* * *

Ֆեոդալական հարաբերությունները, որոնք գոյություն ունեին Հայաստանում մինչև մոնղոլները, սրանց օրով էլ մնացին որպես հասարակական կառուցվածքի հիմունքներ։

Մարքսը նշել է, թե՝

«Բոլոր նվաճումների ժամանակ երիք տեսակ ելք է հնարավոր։ Նվաճող ժողովուրդը ենթարկում է նվաճված ժողովրդին արտադրության այն եղանակին, որ հատուկ է իրեն նվաճողին (օրինակ՝ անգլիացիք Իրլանդիայում այս գարում, մասամբ Հնդկաստանում), կամ՝ նվաճող ժողովուրդը թողնում է, որ հինը մնա, և բավականանում է տուրքով (օրինակ՝ թուրքերն ու հռովմայեցիք), կամ՝ առաջ է գալիս փոխազդեցություն, որի միջոցով առաջանում է մի նորը, իբրև սինթեզ (մասամբ գերմանական նվաճումների ժամանակ)։ Բոլոր դեպքերում էլ արտադրության եղանակն է—լինի դա նվաճող ժողովրդինը, թե նվաճածինը, կամ թե երկուսի խառնուրդից առաջ եկածը,—որ որոշում է նոր, տեղակալող, բաշխումը։ Թեև այդ բաշխումը հրապարակ է գալիս իբրև նոր արտադրաշրջանի նախադրյալ, բայց և այնպես նա ինքը կրկին արտադրության արդյունքն է, այն էլ ոչ թե ընդհանրապես, պատմական, այլ մի որոշ պատմական արտադրության արդյունք։ Օրինակ՝ մոնղոլները վարվում էին իրենց արտադրության եղանակի համապատասխան, երբ ամայացնում էին Ռուսաստանը. անասնապահության գլխավոր պայմանն են մեծ, անմարդաբնակ տարածությունները։»[2]

Տիրելով Միջին և Առաջավոր Ասիային, մոնղոլները նրա որոշ մասերը հարմարեցրին իրենց արտադրաեղանակին, իսկ որոշ մասերում թողեցին արտադրական նույն եղանակը և միայն բավականացան բազմաթիվ և բազմապիսի հարկեր սահմանելով։ Այսպես վարվեցին և անդրկովկասյան երկրների հետ։ Նրանք ստիպված եղան սահմանափակել իրենց քոչվորական կենցաղը, փոքր չափերով նստակյաց դարձան, ձգտելով սիստեմատիկաբար օգտագործել իրենց հաղթանակների պտուղները։ Նրանց քաղաքականությունը ոչ միայն կասեցրեց Հայաստանի արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների զարգացումը, այլև ետ տարավ նրան թերևս մի քանի հարյուրամյակ։

[1] Անդ, էջ 431։

[2] Կ. Մարքս, «Քաղաքատնտեսության քննադատության նուրոյ», Երևան, 1933 թ., էջ 39։

Մոնղոլ նվաճողները գրաված երկրները կառավարում էին ֆեոդալական նույն հիերարխիկ սիստեմով, միայն այստեղ այդ հիերարխիայի հիմքը կազմող ռազմական ուժը ավելի ցայտուն էր հանդես գալիս։

* * *

Թվում է, թե մոնղոլական էպոխայում քաղաքների, առևտրի և արհեստների զարգացումը այլ պատկեր պետք է ունենար, քան գյուղատնտեսությունը։ Սակայն փաստերը գալիս են ասելու, որ այդտեղ էլ տնտեսական կյանքն ընթացել է նույն ուղիով, ինչ որ գյուղատնտեսության ասպարեզում։ Առևտրականների, հատկապես խոշոր առևտրականների նկատմամբ մոնղոլները վարում էին որոշ չափով իրենց շահերին համապատասխան քաղաքականություն։ Ստեղծելով լայնածավալ պետություն, դրանով իսկ նրանք նպաստեցին արտաքին առևտրի զարգացմանը, որը, սակայն, կրում էր կարավանային առևտրի բնույթ և քիչ էր կապվում երկրի ներքին կյանքի հետ ու քիչ էր նպաստում նրա զարգացմանը։

Մարքսը, խոսելով առևտրական կապիտալի մասին, գրում է.

«Առևտրական կապիտալի ինքնուրույն զարգացումը հակադարձ համեմատական է հասարակության ընդհանուր տնտեսական զարգացմանը»։[1]

Առևտրական կապիտալը մինչկապիտալիստական ֆորմացիաներում ոչ միշտ և ոչ բոլոր պայմաններում է առաջադիմական դեր խաղացել։ Իրավացի է Պետրուշևսկին, երբ նշում է, թե ազգարարային կարգերի համեմատական կանգառման պայմաններում, գյուղական համայնքի պահպանման և միևնույն ժամանակ գյուղում ճորտատիրական հարաբերությունների ու մեծ թվով քոչվորների առկայության (Ադրբեջանում՝ մասնավորապես և արևելյան Անդրկովկասում՝ ընդհանրապես) պայմաններում կարավանային առևտրի գլխավոր դերը, ինչպես Մարքսն է նկատել, հանդիսանում էր ոչ այնքան քաղաքային արհեստավորության արտադրած ապրանքների արտահանումը, որքան առևտրական և ընդհանրապես տնտեսական տեսակետից դեռևս չզարգացած հասարակությունների արտադրանքների փոխանակման մեջ միջնորդ հանդիսանալը։[2]

«Այդ իսկ պատճառով,—գրում է Պետրուշևսկին,—մոնղոլական էպոխայում մենք տեսնում ենք գյուղացիության և արհեստավորության շահագործման սաստկացում, վաշխառության և հարկային բեռի աճում և դասակարգային հարաբերությունների սրում գյուղում և քաղաքում»։[3]

Մոնղոլական պետությունը առևտուրը դիտում էր որպես եկամուտի ամենաօգտակար աղբյուր և նրա վրա էլ դնում էր ծանր հարկեր, որպիսի հանդամանքը իր հերթին արգելք էր հանդիսանում երկրի ներսում նրա զարգացմանն ու ծաղկմանը։ Դրա հետ միասին խոշոր առևտրականներին որոշ արտոնություններ էին տրվում։ Նրանց քաղաքականությունը հետաքրքրում էր այդ ասպարեզը շատ ավելի եկամտաբեր դարձնելուն։ Իսկապես,

[1] *К. Маркс*, „Капитал", т. III, стр. 294, изд. 1936 г.
[2] *К. Маркс*, „Капитал", т. III, стр. 295, изд. 1936 г.
[3] Известия АН СССР, отд. общ. наук. 1937 г. № 4, стр. 900.

փաստերը խոսում են այն մասին, որ ժամանակի խոշոր առևտրական կենտրոնները պետական դանձարան էին մուծում ավելի շատ ու բարձր հարկեր, որոնք գերազանցապես հավաքվում էին առևտրից և արհեստներից։ Արտաքին առևտրի զարգացման համար խոշոր նշանակություն են ունեցել առևտրական կարավանային ճանապարհները։ Հայաստանում, մոնղոլական տիրապետության շրջանում գոյություն ունեցող ճանապարհներին զուգընթաց, նրա հարավային շրջաններում բացվել են նոր ճանապարհներ։ 14-րդ դարի կեսերից սկսած առևտրական ճանապարհների ուղղությունների մեջ խոշոր փոփոխություններ են կատարվում։ Եթե 13-րդ դարի վերջին և 14-րդ դարի սկզբին գլխավոր ճանապարհը սկսվում էր իլխանական մայրաքաղաք Թավրիզից ու գնում Նախիջևան—Անի—Մանազկերտ—Երզնկա—Սվազ կեսարիա—Իկոնիա—Այաս ուղղությամբ, ապա հետագայում Երզնկայից այդ ճանապարհից սկիզբ է առնում մի ուրիշ ճյուղ դեպի Տրապիզոն—Սեբաստիա, նույն ժամանակաշրջանում Թավրիզից մի այլ ճանապարհ անցնում է Մրիային—Բագավան—Ալաշկերտ—Բասեն—Էրզրում։ Էրզրումից այդ ճանապարհից մի ճյուղը դեպի Տրապիզոն էր անցնում, մյուսը՝ դեպի Երզնկա—Այաս։ 14-րդ դարի կեսերից սկսում է ուժեղանալ հարավային ճանապարհների դերը՝ Թավրիզ—Խոյ—Ոստան—Բաղեշ—Մղերթ—Հիսանքոյ—Մերդին—Իբր—Ուրֆա—Միջերկրական ծով։ Խոյից անջատվում է մի այլ ճանապարհ՝ Բերկրի—Արճեշ—Խլաթ—Խնուս—Երզնկա—Մալաթիա—Հալեպ—Միջերկրական ծով։

Առևտրական կարավանային մեծ ճանապարհը, որն անցնում էր Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջաններով, այժմ տեղափոխվում է հարավային շրջանները։ Անին, Կարսը իրենց տեղը զիջում են Թավրիզին ու Սուլթանիային։ Արարատյան դաշտի ճանապարհները անբանուկ են դառնում։ Կարավանային մեծ ճանապարհների փոփոխությունն ուներ մի շարք պատճառներ. առաջին ու գլխավոր պատճառը Հուլավյանների և Ոսկե-Հորդայի պետությունների միջև 14-րդ դարի սկզբից սկսված տերիտորիալ պայքարն էր։

Առևտրական ճանապարհների փոփոխությունը, ինչպես շատ ճիշտ նկատում է ակադեմիկոս Մանանդյանը, Հայաստանի տարբեր շրջանների տնտեսական կյանքում տարբեր ձևով է արտահայտվում։[1] Հարավային շրջաններում որոշ չափով սկսում են աշխուժանալ առևտուրը և արհեստները, իսկ հյուսիսային և կենտրոնական շրջաններում քաղաքներն սկսում են քայքայվել ու անկում ապրել։ Սակայն տնտեսական կյանքի այդ անկումը բացատրել հիմնականում առևտրական ճանապարհների փոփոխումով, սխալ կլիներ։ Տնտեսական կյանքի անկումը բացատրելիս անպայման ելակետ պիտի ունենալ նվաճողների վարած տնտեսական ամբողջ քաղաքականությունը։ Առևտուրը կապված չէր և չէր նպաստում երկրի ներքին կյանքի զարգացմանը, քաղաքները և գյուղերը քայքայվել, ամայացել էին, հոգուտ նվաճողների և տեղական իշխողների դանձվում էին բազմաթիվ ու բազմատեսակ հարկեր ու տուրքեր, ըստ որում գործադրվում էին հարկահանման անասելի դաժան ձևեր և թաղավորում էր կամայականությունը։

[1] Акад. *Манандян*, „О торговле и городах Армении", Ереван, 1930 г., стр. 201—208.

Տնտեսական կյանքի կատաստրոֆիկ անկումն ընդհանուր երևույթ էր մոնղոլական լայնածավալ պետության բոլոր մասերում։ Այս հանգամանքն էր, որ մոնղոլական վերջին խաներին ստիպեց որոշ միջոցներ ձեռնարկել։ Այդպիսի փորձ կատարեց Ղազան-խանը 1295—1304 թվերին և Աբու-Սայիդ-խանը՝ 1316—1335 թվերին։ Սրանք տնտեսական կյանքին վերաբերող մի շարք ռեֆորմներ հրապարակեցին, որոնք, սակայն, ժամանակի բարենորոգումներ էին և չէին կարող պետության քայքայման ու անկման պրոցեսը կանգնեցնել։

Մոնղոլների վարած տնտեսական քաղաքականության հետևանքը Հայաստանում այն եղավ, որ նրա գրեթե բոլոր շրջաններից մասսայական արտագաղթ սկսվեց, որը և իր խորը հետևանքները թողեց ու ծանր հարված հասցրեց երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին։

Մոնղոլներն իրենց վարած հարկային և հողային քաղաքականությամբ ձգտել են նվաճված երկրներից քամել վերջին կենսական հյութը։ Հայաստանն իր ամբողջ պատմության ընթացքում մի շարք նվաճողների վարած տնտեսական քաղաքականության զոհն էր դարձել, որի հետևանքով արտադրողական ուժերի զարգացման ընթացքում տեղի են ունեցել մի շարք հետադարձ շարժումներ։

Սակայն սխալ կլիներ Հայաստանի տնտեսական անկման պրոցեսը բացատրել միայն նվաճող մոնղոլների վարած քաղաքականությամբ։ Պետք է նկատի ունենալ, թե նվաճող մոնղոլների վարած քաղաքականությունը ինչ անդրադարձում ունեցավ նվաճված Հայաստանի արտադրահեղանակի, արտադրական փոխհարաբերությունների վրա, և բացահայտել այստեղ կատարված փոփոխությունները։